

Ա Կ Տ Ն Վ Հ 25

«ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅՐԵՆՅԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

28 օգոստոսի 2013 թվական

գ. Հայրենյաց

Համաձայն Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 190-Ա հրամանի և ի կատարումն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի օգոստոսի 2-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայրենյաց համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 86 կարգադրության, աշխատանքային խումբը մասնակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Ռուբեն Հարությունյանի (խմբի ղեկավար), Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Մարիամ Գյողակյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արտավազ Գևորգյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Լյովա Հակոբյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ Արթուր Գրիգորյանի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայրենյաց համայնքի ղեկավար Գևորգ Մարտիրոսյանի, Հայրենյաց համայնքում կատարել է վարչական հսկողություն, որն ընդգրկել է 2010 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2013 թվականի օգոստոսի 1-ն ընկած ժամանակաշրջանը:

Վարչական հսկողությունն սկսվել է 2013 թվականի օգոստոսի 8-ին և ավարտվել՝ 2013 թվականի օգոստոսի 21-ին:

Վարչական հսկողության արդյունքում պարզվել է հետևյալը.

1) Համայնքի նորընտիր ավագանին իր լիազորություններն ստանձնել է 2012 թվականի նոյեմբերի 12-ին, սակայն առաջին նիստը գումարվել է 18 օր ուշացումով («Տեղական

ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված) և չի ընդունել իր գործունեությունը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը կարգավորող կանոնակարգը («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի և 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ)։

2) համայնքի ավագանու կողմից հաստատված (09.02.2009թ. արձ. թիվ 3) 2009-2012թթ. քառամյա զարգացման ծրագրում ընդգրկված մշակույթի տան կտուրի վերանորոգման, գյուղամիջյան կամրջի վերանորոգման աշխատանքները կատարվել են ամբողջությամբ, իսկ ներհամայնքային և համայնքից մինչև Գյումրի-Երևան մայրուղուն միացնող ճանապարհների բարեկարգման աշխատանքները չնայած կատարվել են, սակայն այժմ դրանք դարձյալ գտնվում են անբարեկարգ վիճակում։ Ծրագրում ընդգրկված մշակույթի տան ժամանցի և հանգստի սենյակների, ինչպես նաև գյուղապետարանի շենքի վերանորոգման և կահավորման աշխատանքները կատարվել են մասամբ, իսկ ներհամայնքային փողոցների գիշերային լուսավորության անցկացման, դպրոցի շենքի ջրագծի վերակառուցման, դպրոցի շենքի գազաֆիկացման, հակակարկտային կայանների տեղադրման, ոռոգման համակարգի ստեղծման, կենտրոնացված ջրահեռացման և կոյուղու համակարգի կառուցման աշխատանքները կատարված չեն։

Համայնքի 2013-2016թթ. քառամյա զարգացման ծրագիրն հաստատելու մասին ավագանու որոշումն արձանագրված չէ ավագանու նիստերի գրանցամատյանում։ Ծրագիրը կազմված է թերություններով՝ նրանում ներառված աշխատանքների ֆինանսավորման աղբյուրները, ծավալները, կատարման կոնկրետ ժամկետները նշված չեն, բացի այդ՝ ծրագրում ներառված չեն սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ (ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1351-Ն որոշում)։

3) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթների համաձայն, համայնքի ավագանու որոշումներով հաստատվել են համայնքի 2011, 2012, 2013 թվականների բյուջեները (21.12.2010թ. արձ թիվ 10, 08.12.2011թ. արձ թիվ 9, 20.12.2012թ. արձ թիվ 7)։

Համայնքի ղեկավարի առաջարկություններով ավագանին թվով 20 որոշումներ է կայացրել 2010, 2011, 2012, 2013 թվականների բյուջեներում փոփոխություններ կատարելու մասին։

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթների համաձայն, ավագանու կողմից քննարկվել և հաստատվել են համայնքի 2010, 2011, 2012 թվականների բյուջեների կատարման վերաբերյալ համայնքի ղեկավարի հաշվետվությունները (21.01.2011թ. արձ. թիվ 1, 23.01.2012թ. արձ. թիվ 1, 21.01.2013թ. արձ. թիվ 1)։

4) համայնքի ավագանին առանձին ղեպքերում չի վերահսկել համայնքի բյուջեի կատարման ընթացքը, մասնավորապես բյուջեի՝ 2010 թվականի 3-րդ եռամսյակի, 2012 թվականի 1-ին եռամսյակի, 3-րդ եռամսյակի, 2013 թվականի 1-ին եռամսյակի կատարման վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումները չեն քննարկվել ավագանու նիստերում («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ, և 69-րդ հոդվածի 1-ին մաս)։

Ուսումնասիրված ժամանակաշրջանում համայնքը վարկեր չի ստացել։

5) համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ ավագանու որոշումներով, համայնքի առանձին բնակիչների տրամադրվել են ֆինանսական աջակցություններ։ Այդ որոշումների մի մասը (18.03.2011թ. արձ. թիվ 2, 13.04.2011թ. արձ. թիվ 3) ստորագրված չեն համայնքի ղեկավարի ու ավագանու անդամների կողմից։

6) համայնքի ավագանին 2011 թվականի մայիսի 17-ին որոշել է (արձ. թիվ 4) համայնքային սեփականություն հանդիսացող խմելու ջրի ներտնտեսային համակարգն անհատույց օգտագործման տրամադրել «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին.

7) համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու փաստեր չեն արձանագրվել.

8) համայնքի ղեկավարի՝ օրենքին և իրավական այլ ակտերին հակասող որոշումների դատական կարգով վիճարկման դեպքեր չեն եղել.

9) համայնքի ավագանին սահմանված կարգով որոշումներ է կայացրել 2011, 2012, 2013 թվականների համար համայնքի ղեկավարի վարձատրության չափերը որոշելու մասին (21.12.2010թ. արձ. թիվ 10, 08.12.2011թ. արձ. թիվ 9, 20.12.2012թ. արձ. թիվ 7).

10,11) համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, դրանց վերակազմակերպման կամ լուծարման, բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուներին համաձայնություն տալու վերաբերյալ համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել՝ դրանց անհրաժեշտությունը չլինելու պատճառով.

12) առևտրի, հասարական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնների վերաբերյալ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետը հանված է (08.12.11 ՀՕ-342-Ն).

13) համայնքի ավագանին 2010, 2011, 2012 թվականների համար համապատասխան որոշումներ է կայացրել օրենքով սահմանված դեպքերում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ (13.04.2011թ. արձ. թիվ 3, 08.12.2011թ. արձ. թիվ 9, 20.12.2012թ. արձ. թիվ 7).

14) համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ ավագանին որոշումներ չի կայացրել.

15) համայնքի ղեկավարի առաջարկությամբ ավագանին որոշում է կայացրել համայնքային սեփականություն համարվող խմելու ջրի ներտնտեսային համակարգը «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին անհատույց օգտագործման տրամադրելու մասին: Ավագանու այս որոշման մեջ նշված չեն գույքն օգտագործման տրամադրելու նպատակն ու ժամկետը («Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետ).

16) ուսումնասիրված ժամանակաշրջանում համայնքային նշանակության փողոցների, պողոտաների, հրակայարակների, զբոսայգիների, համայնքային ենթակառուցվածքային կրթական, մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել.

17) համայնքի ավագանին համապատասխան որոշումներ է կայացրել 2011, 2012, 2013 թվականների համար աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերն հաստատելու վերաբերյալ (21.12.2010թ. արձ. թիվ 10, 08.12.2011թ. արձ. թիվ 9, 20.12.2012թ. արձ. թիվ 7):

Համայնքային ծառայության պաշտոնների մասով աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը և (կամ) հաստիքացուցակը հաստատելու, ինչպես նաև փոփոխելու և (կամ) լրացնելու, համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու նպատակով Հայաստանի

Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին դիմելու մասին համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:

18) համայնքի ավագանին չի հաստատել համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը:

19) համայնքի ավագանին հաստատել է համայնքի սեփականության 2010, 2011, 2012 թվականների գույքագրման փաստաթղթերը (21.12.2010թ. արձ. թիվ 10, 08.12.2011թ. արձ. թիվ 9, 20.12.2012թ. արձ. թիվ 7):

«Հ կառավարության 1997 թվականի մարտի 14-ի թիվ 51 որոշմամբ սահմանված ՀՀ Շիրակի մարզի Հայրենյաց համայնքի գույքի ցանկում նշված մարզադաշտը, ներհամայնքային փողոցները, ներհամայնքային նշանակության ճանապարհները, ներհամայնքային կամուրջը, գերեզմանատունը ներառված չեն համայնքի ավագանու կողմից հաստատված ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

1. Ֆինանսների բնագավառ

1) Համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն կազմել և սահմանված ժամկետներում համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացրել համայնքի 2011-2013 թվականների բյուջեների նախագծերը (21.12.2010թ. արձ. թիվ 10, 08.12.2011թ. արձ. թիվ 9, 20.12.2012թ. արձ. թիվ 7), եռամսյա հաղորդումները (ավագանու որոշումներ՝ 13.04.2011թ. թիվ 7, արձ. թիվ 1, 15.07.2011թ. թիվ 16, արձ. թիվ 2, 19.10.2011թ. արձ. թիվ 8/1, 23.07.2012թ. թիվ 8-Ա, արձ. թիվ 4/1, 3), տարեկան հաշվետվությունները (ավագանու որոշումներ՝ 21.01.2011թ. թիվ 3, արձ. թիվ 1, 23.01.2012թ. թիվ 1-Ն, արձ. թիվ 1/1 և 21.01.2013թ. թիվ 1-Ն, արձ. թիվ 1/1):

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 68-րդ և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածների՝ համայնքի 2010-2012թթ. բյուջեների կատարողականների վերահսկողություն համայնքի ավագանու կողմից չի իրականացվել: Համայնքի բյուջեների կատարողականների տարեկան հաշվետվություններն ավագանին քննարկել և հաստատել է առանց աուդիտորական եզրակացության:

2) համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացրել է ավագանու հաստատմանը (13.04.2011թ. արձ. թիվ 3, 08.12.2011թ. արձ. թիվ 9, 20.12.2012թ. արձ. թիվ 7):

3) համայնքի ղեկավարը ոչ լրիվությամբ է իրականացրել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2.1 մասի դրույթով սահմանված՝ տեղական տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքային սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումների կազմակերպման և վերահսկման վերաբերյալ պարտադիր լիազորությունները:

2010թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 13851.1 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 13781.0 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 99.5 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 70.1 հազար դրամ:

2011թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 12834.0 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 12874.0 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 100.3 %-ով, կամ ավել է հավաքագրվել 40.0 հազար դրամ:

2012թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 13023.1 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 11024.3 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 84.7 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 1998.8 հազար դրամ:

2013 թվականի 7 ամիսների համայնքի բյուջեով նախատեսված 7843.9 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 7737.8 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 98.6 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 106.1 հազար դրամ:

4) համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2.2 մասի պահանջի, համայնքի ղեկավարի կողմից տեղական հարկեր, տեղական տուրքեր և վճարներ չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցներ չեն կիրառվել:

5) համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ղեկավարը ավագանու հաստատմանը չի ներկայացրել:

6) համայնքի ղեկավարը ստուգված ժամանակաշրջանում ոչ լրիվությամբ է ապահովել համայնքի բյուջեի եկամուտների ամբողջական կատարումը:

Համայնքի վարչական բյուջե հավաքագրված գումարները հիմնականում ծախսվել են աշխատավարձերի, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների, էլեկտրաէներգիայի, կոմունալ վճարումների, գործուղումների, համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն տրամադրելուն, տրանսպորտային նյութերի ձեռք բերման և այլ ծախսերի կատարման համար, իսկ ֆոնդային բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել են ոչ լրիվությամբ:

2. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

1) Հայրենյաց համայնքի ղեկավարի կողմից համայնքի գլխավոր հատակագծի ու հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների, գոտիավորման այլ փաստաթղթերի կազմման գործառույթներ չեն իրականացվել:

2) համայնքի քաղաքաշինական կադաստրի սահմանված կարգով վարման, համայնքի քաղաքաշինական կանոնադրության կազմման և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելու գործընթաց չի իրականացվել:

3) համայնքի ղեկավարի կողմից համայնքի բնակչությանը միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին իրազեկման դեպքեր չեն արձանագրվել, կառուցապատողին տրվել է 1 ճարտարապետահատակագծային (ՃՀԱ՝ 06.06.2012թ. N:01) առաջադրանք և համաձայնեցվել է 1 ճարտարապետաշինարարական նախագիծ:

Գործընթացներն իրականացվել են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

4) համայնքի ղեկավարի կողմից տրամադրվել են 2 շինարարության թույլտվություն՝ Հայրենյացի կամուրջի հիմնանորոգման աշխատանքների (05.08.2010թ. N:1) և Հայրենյաց համայնքի դպրոցի վերանորոգման (02.07.2012թ. N:1) համար:

Նշված գործընթացներն իրականացվել են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

5) ձևակերպվել են 2՝ Հայրենյացի կամուրջի հիմնանորոգման (14.09.2010թ. N:1) և Հայրենյաց համայնքի դպրոցի վերանորոգման վերաբերյալ (23.08.2012թ. N:1) ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտեր:

6) չեն հայտնաբերվել ինքնակամ շինարարության կանխման ու կասեցման դեպքեր, հետևաբար՝ օրենքով սահմանված կարգով դրանց հետևանքների վերացման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

7) համայնքի ղեկավարի կողմից շենքերի և շինությունների նպատակային օգտագործման և պահպանման կառուցապատողներին տրված ճարտարապետահատկագծային առաջադրանքի պահանջների կատարման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

8) համայնքի ղեկավարի կողմից կատարվել են համայնքային սեփականություն համարվող շենքերի ու շինությունների հաշվառման, սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերի կազմման աշխատանքներ և ներկայացվել համայնքի ավագանու հաստատմանը:

9) համայնքի քաղաքաշինական կանոնադրությանը համապատասխան արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն չի տրամադրվել:

10) համայնքի ղեկավարի առաջարկությամբ ավագանին որոշում է կայացրել համայնքային սեփականություն համարվող խմելու ջրի ներտնտեսային համակարգը «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

11) համայնքը չունի բազմաբնակարան բնակելի շենքեր, ուստի համապատասխան գործառույթներ չեն իրականացվել:

3. Հողօգտագործման բնագավառ

1) Հայրենյաց գյուղական համայնքը կառավարության սահմանած կարգով կազմված հողերի գոտիավորման և օգտագործման սխեմա չունի՝ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:

2) համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են ընդամենը 686.07 հա, այդ թվում՝ վարելահող - 83.01 հա, արոտ - 587.4 հա և այլ հողեր - 15.66 հա:

Ընդերքօգտագործման հողերը կազմում են՝ 12.75 հա, որից 12.3 հա օգտագործվում է օրենքով սահմանված կարգով, իսկ 0.45 հա օգտագործման տրամադրված չէ և չի շահագործվում:

Գյուղապետարանում առկա է համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի համար կնքված և պետական գրանցման ենթարկված 54 վարձակալության պայմանագրեր, որոնցից 50 վարձակալության պայմանագրեր կնքվել են 60.94 հա վարելահողերի համար՝ 533.5 հազ. դրամ վարձավճարով և 4 վարձակալության պայմանագրեր՝ 12.3 հա ընդերքօգտագործման հողերի համար՝ 122.5 հազ. դրամ վարձավճարով:

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 22.04 հա վարելահողերը և 587.4 հա արոտներն օրենքով սահմանված կարգով օգտագործման տրամադրված չեն:

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝

01.08.2010–31.12.2010թթ. ժամանակահատվածում բյուջեով նախատեսված 411.7 հազ. դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 303.3 հազ. դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին: Նույն ժամանակահատվածում

վարձակալների կողմից համայնքի հաշվարկային հաշվին մուտքագրվել է 87.0 հազ. դրամ գումար: Ընդամենը համայնքի հաշվարկային հաշվին մուտքագրվել է 390.3 հազ. դրամ, այսինքն բյուջեով նախատեսվածից պակաս է մուտքագրվել 21.4 հազ. դրամ:

2011 թվականի բյուջեով նախատեսված 972.5 հազ. դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 647.25 հազ. դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին: Նույն ժամանակահատվածում վարձակալների կողմից համայնքի հաշվարկային հաշվին մուտքագրվել է 88.25 հազ. դրամ գումար: Ընդամենը համայնքի հաշվարկային հաշվին մուտքագրվել է 735.5 հազ. դրամ, այսինքն բյուջեով նախատեսվածից պակաս է մուտքագրվել 237.0 հազ. դրամ:

2012 թվականի բյուջեով նախատեսված 1090.5 հազ. դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 638.8 հազ. դրամ գումար և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին, այսինքն բյուջեով նախատեսվածից պակաս է մուտքագրվել 451.7 հազ. դրամ:

01.01.2013-01.08.2013թթ. դրությամբ բյուջեով նախատեսված 441.6 հազ. դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 376.5 հազ. դրամ գումար և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին, այսինքն բյուջեով նախատեսվածից պակաս է մուտքագրվել 65.1 հազ. դրամ:

01.08.2010-01.08.2013թթ. ժամանակահատվածում համայնքային և պետական սեփականություն համարվող հողամասերի օտարում չի իրականացվել:

3) համայնքի գյուղացիական տնտեսություններում հաշվառված 658 գլուխ խոշոր եղջերավոր անասունների առկայության պայմաններում 587.4 հազ. արոտները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտագործման տրամադրված չեն: Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկվել ապօրինի հողօգտագործումը կանխելու և արդի օգտագործումը օրենքով սահմանված կարգով կազմակերպելու ուղղությամբ:

4) 01.08.2010-01.08.2013թթ. ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից ապօրինի հողօգտագործման դեպքեր չեն արձանագրվել:

5) օրենքով սահմանված կարգով իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռի կազմման գործընթացը:

6) պատշաճ վերահսկողություն է իրականացվել համայնքի վարչական տարածքում գտնվող թվով 4 գերհեզիական կետերի և սահմանանիշերի պահպանության նկատմամբ:

4. Տրանսպորտի բնագավառ

1) Համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանման և շահագործման կազմակերպման գործառույթներ չեն իրականացվել:

2) համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի ու համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների և կազմակերպությունների գործունեության կազմակերպման և կառավարման գործառույթներ չեն իրականացվել:

3) իրավասու մարմինների ներկայացմամբ համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության նշանների տեղակայման ու հանման հաստատման և թույլատրման գործառույթներ չեն իրականացվել:

4) ՀՀ կառավարության սահմանած կարգով և ՀՀ ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհներին վերաբերող մասով լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմա չի կազմվել և համայնքի ավագանու հաստատմանը չի ներկայացվել (համայնքային ենթակայության ճանապարհների մասով)՝ դրա անհրաժեշտությունը չլինելու պատճառով:

5. Առևտրի և ծառայությունների բնագավառ

1) ՀՀ Շիրակի մարզի Հայրենյաց համայնքում գործում է 3 առևտրի օբյեկտ: 2010 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2013 թվականի օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում համայնքում գործող առևտրի օբյեկտներում անցկացվել են ընդամենը ութ ստուգումներ (տարեկան 2-3 ստուգում): Ստուգումների ընթացքում ոչ մի խախտում չի բացահայտվել և չի արձանագրվել: Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կատարված ստուգումների արդյունքներով չի կազմվել ոչ մի ակտ (սահմանված ձևի): Նշված ժամանակահատվածում Հայրենյաց համայնքում գործող առևտրի օբյեկտների նկատմամբ չի կիրառվել ոչ մի վարչական տույժ: Իրականացված հսկողությունը կրել է մակերեսային, կրել է ձևական բնույթ: Օրենքով սահմանված հաշվետվությունները համայնքի ղեկավարը ոչ միշտ է ներկայացրել ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմ:

2) ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի համար դիմել և թույլտվություններ են ստացել համայնքի 3 տնտեսվարող սուբյեկտներ:

3) համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու համար թույլտվություններ չեն տրամադրվել՝ դիմողներ չլինելու պատճառով:

4) համայնքի տարածքում առևտրի հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքների (սաունաների), խաղատներին ժամը 24⁰⁰-ից հետո աշխատելու ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով թույլտվություններ չեն տրամադրվել՝ դիմողներ չլինելու պատճառով:

5) համայնքի տարածքում «Թանկարժեք մետաղների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի առաջին մասին համապատասխան՝ թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առքուվաճառքի թույլտվություններ չեն տրամադրվել՝ դիմողներ չլինելու պատճառով:

6) համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազի վաճառքի թույլտվություններ չեն տրամադրվել՝ դիմողներ չլինելու պատճառով:

7. Այլ բնագավառներ

1) 2012 թվականի նոյեմբերի 12-ին իր լիազորություններն ստանձնած համայնքի նորընտիր ավագանին չի ընդունել իր գործունեությունը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը կարգավորող կանոնակարգը («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մաս և 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ), իսկ ուսումնասիրված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից հրավիրվել և անցկացվել են համայնքի

ավագանու 26 նիստեր, որոնցում քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող 62 հարցեր և ընդունվել նորմատիվ ու անհատական բնույթի 61 որոշումներ ու 1 արձանագրություն:

Գյուղապետարանի աշխատակազմում վարվում են համայնքի ավագանու նիստերի արձանագրությունների երեք գրանցամատյաններ, որոնք լրացված են թերություններով, մասնավորապես՝ 2013-2016թթ. քառամյա զարգացման ծրագրի հաստատման մասին որոշումն արձանագրված չէ գրանցամատյանում, կան որոշումներ որոնք ստորագրված չեն ավագանու անդամների կողմից (21.01.2011թ. արձ. թիվ 1, 18.03.2011թ. արձ. թիվ 2, 13.04.2011թ. արձ. թիվ 3, 17.05.2011թ. արձ. թիվ 4, 19.10.2011թ. արձ. թիվ 8, 16.05.2012թ. արձ. թիվ 3):

Համայնքի ավագանու նիստերի անցկացման պարագայում խախտվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը, ըստ որի՝ ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ: Մասնավորապես՝ ավագանու 2013 թվականի հունվարի 21-ի թիվ 1 նիստին հաջորդել է 2013 թվականի ապրիլի 30-ի թիվ 2 նիստը (40 օր ուշացումով):

2) համայնքի ղեկավարն ապահովել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1^ա կետի պահանջը և իր կողմից ընդունված անհատական ակտերը սահմանված ժամկետում ուղարկել է համայնքի ավագանու անդամներին և փակցրել համայնքի ավագանու նստավայրում:

3) համայնքի ղեկավարն 2008-2012թթ. և 2013-2016թթ. համայնքի քառամյա զարգացման ծրագրերը ներկայացրել է ավագանու հաստատմանը:

4) համայնքի ավագանին չի հաստատել գյուղապետարանի աշխատակազմի կանոնադրությունը («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետ):

Գյուղապետարանի աշխատակազմն առանձնացված ստորաբաժանումներ, համայնքը՝ բյուջետային հիմնարկներ և ոչ առևտրային կազմակերպություններ չունի:

5) աշխատակազմի և բյուջետային հիմնարկների կառուցվածքների ու դրանցում առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ որոշումների նախագծեր չեն ներկայացվել ավագանու հաստատմանը:

6) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթների համաձայն, համայնքի ղեկավարը 2011, 2012, 2013 թվականների համար աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերը սահմանված կարգով ներկայացրել է համայնքի ավագանու հաստատմանը:

Համայնքի ղեկավարի կողմից աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի փոփոխության վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:

7) ուսումնասիրված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:

8) համայնքի ղեկավարի կողմից համայնքային ենթակայության առևտրային կազմակերպությունների խորհրդների և վերստուգիչ մարմինների կազմերի վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ավագանու հաստատմանը չեն ներկայացվել՝ առևտրային կազմակերպությունների բացակայության պատճառով:

9) համայնքի ղեկավարի տեղակալի և աշխատակազմի քարտուղարի պաշտոններում նշանակում և զբաղեցրած պաշտոններից ազատում չի եղել:

Հայրենյացի գյուղապետարանն առանձնացված ստորաբաժանումներ չունի.

10) համայնքը բյուջետային հիմնարկներ չունի.

11) համայնքի ղեկավարի կողմից տեղական հանրաքվե նշանակելու մասին որոշման նախագծեր համայնքի ավագանու հաստատմանը չեն ներկայացվել.

12) Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների համայնքների հետ համագործակցության մասին պայմանագրեր չեն կնքվել.

13) համայնքի ղեկավարի կողմից, ավագանուն՝ համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օտարման մասին առաջարկություն չի ներկայացվել.

14) համայնքի ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ համայնքի ավագանուն առաջարկներ չեն ներկայացվել.

15) համայնքի ղեկավարի կողմից համայնքի փողոցների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկների անվանման կամ վերանվանման վերաբերյալ համայնքի ավագանուն առաջարկներ չեն ներկայացվել.

16) ուսումնասիրված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից թվով 26 որոշումներ են կայացվել շինությունների համարակալման (հասցեավորման) վերաբերյալ.

17) իր իրավասության սահմաններում համայնքի ղեկավարն ընդունել է 64 որոշում և արձակել 7 կարգադրություն.

18) ՀՀ օրենսդրության սահմանած կարգով՝ ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ, պետության պատվիրակած լիազորությունների իրականացման կազմակերպման և ղեկավարման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել.

20) համայնքի ղեկավարի կողմից համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրների վարման աշխատանքներ չեն իրականացվել.

21) համայնքի ղեկավարի կողմից ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, ինչպես նաև տեխնոլոգիական և տարերային աղետների վտանգների նվազեցման ու հետևանքների վերացման հետ կապված հնարավոր աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:

Համայնքի ղեկավարի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ 6 որոշմամբ, նույն թվականի մարտի 22-ին կազմակերպվել է «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը ձնաբքի դեպքում» թեմայով ուսումնավարժանք.

22) գյուղապետարանում վարվում են թվով 3 համայնքային գրքեր (ծխամատյան) և կազմակերպվում են համայնքի բնակիչների հաշվառումը, սակայն գրքերից բացակայում են տնտեսությունների անդամների ստորագրությունները, իսկ 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ նաև բացակայում է աշխատակազմի քարտուղարի ստորագրությունը, որոնցով կհաստատվեր գրանցումների արժանահավատ լինելը.

23) համայնքի ղեկավարի կողմից համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում ներկայացնելու դեպքեր չեն արձանագրվել.

24) համայնքի բնակիչների թիվը 842 է: Օրենքով սահմանված կարգով, համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քննարկվել են քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները և ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ.

25) համայնքի ավագանին 2011 թվականի հուլիսի 15-ի թիվ 17 որոշմամբ (արձ. թիվ 5) հաստատել է խնամակալության ու հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը: Խնամակալության և հոգաբարձության մարմինների՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների իրականացման փաստեր չեն արձանագրվել:

26) համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքեր չեն արձանագրվել:

27) գյուղապետարանում վարվում է համայնքի զինապարտների գրանցամատյան: Ուսումնասիրված ժամանակաշրջանում համայնքի զինապարտ քաղաքացիների կողմից իրենց պարտականությունների չկատարման դեպքեր չեն արձանագրվել:

ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՄ

1) Համայնքի ղեկավարը գյուղապետարանի աշխատակազմի կանոնադրությունը չի ներկայացրել ավագանու հաստատմանը, որով խախտվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի դրույթը:

2) գյուղապետարանի աշխատակազմում վարվում են համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու և գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի իրավական ակտերի հաշվառման մատյաններ, որոնք լրացված են թերի, մասնավորապես՝ կարված (ժապավենված), իսկ թերթերը՝ համարակալված չեն (ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի «Հասարակությանն իրավական ակտերի մասին իրազեկման և իրավական ակտերի հաշվառման կարգերը հաստատելու մասին» թիվ 1146-Ն որոշմամբ հաստատված կարգի (N 2 հավելվածի) 7-րդ կետ):

Համայնքի ավագանու որոշումների հաշվառման մատյանում նշված է, որ 2013 թվականի հունվարի 21-ի թիվ 3 որոշումը վերաբերվում է համայնքի քառամյա զարգացման ծրագիրը հաստատելուն, սակայն ավագանու որոշումների գրանցամատյանում արձանագրված թիվ 3 որոշումը կայացվել է 2013 թվականի ապրիլի 30-ին և այն վերաբերվում է ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Ծիրակի մարզի Հայրենյացի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2013 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 15 որոշման մեջ փոփոխություններ կատարելուն:

3) կադրային գործի վարման նկատմամբ ուսումնասիրված իրավական ակտերն համապատասխանում են իրավական ակտերի հաշվառման մատյաններում կատարված գրառումներին:

4) գյուղապետարանի աշխատակազմն ստորաբաժանում չունի:

5) ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանով հաստատված (ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի 2008 թվականի հուլիսի 18-ի թիվ 30-Ա և 2009 թվականի հունվարի 15-ի թիվ 02-Ա հրամաններով փոփոխված) Հայրենյացի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 4-ն են՝ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար (ծածկագիր՝ 1.2-1), երկու՝ 1-ին կարգի մասնագետներ (ծածկագիր՝ 3.2-1 և 3.2-2) և 2-րդ կարգի մասնագետ (ծածկագիր՝ 3.3-1):

Համայնքի ավագանու որոշումներով հաստատված պաշտոնային դրույքաչափերն համապատասխանում են «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի և «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

6) համայնքի ղեկավարի 2012 թվականի մայիսի 6-ի թիվ 12-Ա որոշմամբ հաստատվել են (1-ից 4 հավելվածներ) գյուղապետարանի աշխատակազմի 4 համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը և ուժը կորցրած են ճանաչվել նախկին որոշումները: Համայնքի ղեկավարի 2012 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 20 որոշմամբ աշխատակազմի 1-ին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3.2-1) պաշտոնի անձնագրում կատարվել են փոփոխություններ՝ ՀՀ գործող օրենսդրությանն համապատասխանեցնելու նպատակով:

Ուսումնասիրված ժամանակաշրջանում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկից պաշտոններ չեն հանվել և նոր պաշտոններ չեն ավելացվել:

7) չեն պահպանվել ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 20-Ն հրամանով սահմանված համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգի 7-րդ կետի «ը» և «իա» ենթակետերի պահանջները, մասնավորապես՝ աշխատակազմի քարտուղար Լամարա Մաթևոսյանի և աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ Ալվարդ Աբրահամյանի անձնական գործերից բացակայում են նոր անձնագրերի պատճենները, 2013 թվականի 1-ին կիսամյակում կատարած աշխատանքների մասին անմիջական ղեկավարին ներկայացվող հաշվետվությունները, աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ Հոփսիկ Աբրահամյանի անձնական գործից բացակայում է նոր անձնագրի կամ վավերականության ժամկետը երկարաձգած անձնագրի պատճենը, աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ Գոհարիկ Գալստյանի անձնական գործից բացակայում է 2012 թվականի 2-րդ կիսամյակում կատարած աշխատանքների մասին աշխատակազմի քարտուղարին ներկայացվող հաշվետվությունը:

8) համայնքի ավագանին 2012 թվականի նոյեմբերի 1-ին որոշել է (արձ. թիվ 7) համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկել ավագանու երկու անդամների, որից հետո համայնքի ղեկավարի 2012 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 21 որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի նոր կազմը: 2012 թվականի նոյեմբերի 6-ին հրավիրվել է հանձնաժողովի աշխատակարգային նիստ, ընտրվել է հանձնաժողովի նախագահի տեղակալ:

9) համայնքի ղեկավարի 2012 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 22 որոշմամբ հաստատվել է աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը:

10) համայնքի ղեկավարի 2012 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 23 որոշմամբ հաստատվել է գյուղապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը:

Կանոնակարգը պատշաճ կարգով իրազեկվել է աշխատակազմի աշխատակիցներին:

11) աշխատակազմում վարվում է համայնքային ծառայողների անձնական գործերի հաշվառման մատյան, իսկ մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալների գրառման, վերապատրաստման հաշվառման մատյաններ չեն վարվում:


12) համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնողների կրթության, համապատասխան ստաժի և այլ տվյալներն համապատասխանում են համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրության և տվյալ պաշտոնի անձնագրի պահանջներին:


13) համայնքի ղեկավարի կողմից ՀՀ Շիրակի մարզպետարան ներկայացված գրանցամատյանային (Ձև թիվ 1 և Ձև թիվ 2) տվյալներն արժանահավատ են:


14) համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների փաթեթները կազմված են ՀՀ օրենսդրությանն համապատասխան:


15) գյուղապետարանում վարվում է համայնքի զինապարտների գրանցամատյան:


16) ՀՀ Շիրակի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 01/10.1/6161-12 գրությամբ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ներկայացվել է տեղեկատվություն՝ 2012 թվականի սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից ՀՀ Շիրակի մարզի Հայրենյացի գյուղապետարանի աշխատակազմի կադրային գործի վարման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքում արձանագրված թերությունների ու բացթողումների վերացման ուղղությամբ կատարված աշխատանքների մասին:


 ՌՌԻԲԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

 ՄԱՐԻԱՄ ԳՅՈՂԱԿՅԱՆ


 ԱՐՏԱՎԱՋԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ

 ՀՈՒՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

 ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

 ԼՅՈՎԱ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

 ԳԵՎՈՐԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ